ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 22/5» ծածկագրով **«համակարգչային տեխնիկայի»** ձեռքբերման էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի

«Հրավերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելու նիստի»

ք. Էջմիածին **«25» ապրիլի 2022 թ.**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վաղարշապատի համայնքապետարանի Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Գ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի ժ/պ՝ Խ. Զազյան

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետի ժ/պ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ՝ Լ. Քալաշյան

1. Հրավերի վերաբերյալ պարզաբանում տալու մասին

1.1 «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 22/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 23.04.2022 թ. ստացվել են հետևյալ հարցադրումները.

Հարցադրում 1

Հարգելի պատվիրատու, 2-րդ չափաբաժնով պահանջվող համակարգիչների համար պրոցեսորի մոդելը նշված է "նվազագույնը i3 11400": Նման մոդելի պրոցեսոր գոյություն չունի: Խնդրում ենք հստակեցնել պահանջվող պրոցեսորի նկատմամբ նվազագույն պահանջները:

Հարցադրում 2

Հարգելի պատվիրատու, խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին՝

Հարց 1, Հրավերի 1-2 չափաբաժիններով պահանաջվող համակարգիչների մայրական սալիկի համար պահանջվում է " DP (Display Port) մուտք" (երևի նկատի ունեք "ելք"): Միևնույն ժամանակ 1-ին չափաբաժնով պահանջվող մոնիտորի համար նշված է HDMI մուտք, իսկ 2-րդ չափաբաժնով պահանաջվող մոնիտորի համար նշված է VGA, DVI մուտքեր: Ընդունելի է՞, եթե առաջարկվեն համակարգիչներ, որոնց մայրական սալիկը DP (Display Port) ելք չունենա:

Հարց 2. Առաջին չափաբաժնի պահանջվող տեխնիկական բնութագրերում առկա է "DVD" գրառում: Ի՞նչ պետք է հասկանալ դրա տակ:

Հարց 3, Կարող են 1-2 չափաբաժիններով պահանջվող համակարգիչների սնուցման սարքերը չլինել pfc տիպի:

Բոլոր հարցերը նպատակ ունեն, որպես խորհրդատվություն, իջեցնելու պահանջվող համակարգիչների նկատմամբ Ձեր պահանջները, որպեսզի հնարավոր լինի կատարել Ձեր գնումների պլանով նախատեսված գումարի շրջանակներում առաջարկներ:

1.2 «ՀՀ ԱՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ 22/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 25.04.2022 թ. ստացված հարցադրումներին պատասխանել հետևյալ բովանդակությամբ.

Պարզաբանում 1

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք, որ 2-րդ չափաբաժնով պահանջվող համակարգչի տեխնիկական բնութագրով սահմանված Պրոցեսորի նվազագույն պահանջը i3 11400 է, սակայն կարող է լինել ավելի բարձր:

Պարզաբանում 2

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում ենք, որ

1. Հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանաջվող համակարգիչների մայրական սալիկի համար պահանջվում է DP (Display Port) մուտք/ելք:

2. Հրավերի 1-ին չափաբաժնով պահանաջվող համակարգչի տեխնիկական բնութագրով պահանջված DVD գրառումը նշանակում է, որ պետք է առկա լինի DVD սկավառակ ընթերցող սարք:

3. Պարզաբանման ենթակա մյուս հարցադրումների համար հայտնում ենք, որ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդունվում է որոշում՝ 3 կողմ, 0 դեմ:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝
Վաղարշապատի համայնքապետարանի Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Գ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝
Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետի ժ/պ՝ Խ. Զազյան

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետի ժ/պ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ՝ Լ. Քալաշյան